Կոմիտաս

Կարապետ Կոստանյանին, 1897, 27/15 ապրիլի, Բեռլին

Ձեր խրախուսական նամակը, որպիսիներին միշտ կարօտ եմ բանդխտութեանս օրերում, քաջալերերց եւ ուժ տուեց ինձ, գոնէ կա՛յ մէկը, որը կարող է դիտելու ու գնահատելու: Քանի խորունկն եմ մտնում երաժշտական ծիծաղածին ծովի մէջ, նոյնքան պնդուում է համոզմունքս, թէ՝ մեր ե՛ւ ժողովրդական ե՛ւ եկեղեցական աննման ու վեհ եղանակները, որոնք քոյր եղբայր են շա՛տ վաղուց, ապագայում նո՛յնպէս օտարների համար ուսումնասիրութեան աղբիւր պէտք է դառնայ. որովհետեւ արմատը շատ խորն հնութիւն է տանում հասցնում, մինչեւ Հայի ծագումը, ա՛յնտեղ նորանից անբաժան, ծլում եւ նորա՛ հետ է մեզ հասնում: Ուսուցչապետս միշտ կրկնում է. Դուք ստեղծել էք երաժշտական ազնիւ եւ ինքնուրոյն ոճ, որ կարմիր գծի պէս ձեր ամբողջ գրուածքների եւ շարադրութեանց մէջ պայծառ անց է կենում. այդ ոճը ես անուանում եմ Հայկական ոճ, ասում է, որովհետեւ մեր երաժշտական ծանօթ աշխարհի համար նորութիւն է: Մեր ազգային հին երգերին ազգային եղանակ յարմարեցնելու միտքն իմ մէջ եւս ծագել էր եւ այդ գլուխ կարող է գալ. բայց շարականի եղանակների եւ բանաստեղծութեան տաղաչափական եւ շեշտական կանոնները պարզուելո՛ւց յետոյ, որովհետեւ եղանակների շեշտադրութիւնը գրեթէ չեն համաձայնում լեզուի արդի շեշտադութեան կանոններին եւ գործածութեան, ինձ թուում է, թէ նախնիք այլ կերպ են շեշտադրութիւն ունեցել: Հնագոյն եւ հեղինակներն անյայտ շարականների տաղաչափութիւնը շատ հետաքրքրական է, որ բաւական պարզուեցաւ ինձ համար, որովհետեւ երաժշտական

շեշտադրութիւնը պահուած է երեւում, որին կից է եւ լեզուինը: